ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 charentsavan.kotayk@mta.gov.am

ՈՒՂԵՐՁ

Մեծարգո՛ պարոն վարչապետ,

Չարենցավան համայնքում արդեն մեկ տարի է, ինչ չի գործում անձնագրային բաժինը:

Համայնքը խոշորացված է և ունի 42750 բնակիչ: Յուրաքանչյուր օր մեծ թվով բնակիչներ են գնում այլ համայնքների անձնագրային բաժիններ՝ անձնագրային ծառայություններից օգտվելու համար:

Այս հարցի շուրջ համայնքում ձևավորվել էր նախաձեռնող խումբ, որը 2024թ. հավաքեց մոտ 10 հազար ստորագրություն՝ դադարեցված անձնագրային բաժնի գործունեության վերսկսման խնդրանքով:

ՆԳՆ ոլորտի պատասխանատուների հետ հանդիպման ժամանակ նրանք ևս ընդունել էին առկա խնդիրը 40 հազարից ավել բնակչության համար և առաջարկել հետևյալ լուծումները. Հրազդանի անձնագրային բաժանմունքից մեկ կամ երկու աշխատակից տեղակայել Չարենցավանում կամ դրա փոխարեն ներդնել շրջիկ անձնագրային:

Շրջիկ սպասարկման ծառայությունը մեկ տարի է արդեն գործում է: Քաղաքում լինում է անկանոն, ամիսը մեկ անգամ միջին հաշվով, այն էլ, չապահովելով ծառայությունների ամբողջական փաթեթը: Օրինակ՝ նույնականացման քարտ ստանալու համար բնակիչը չի կարող դիմել շրջիկ սպասարկման աշխատակցին:

Խնդրում ենք Ձեզ, վերստին քննարկել ՀՀ ՆԳ նախարարության ՔԾՄ ծառայության երկու աշխատակից տեղակայելու հարցը այն նույն տարածքում, որտեղ ժամանակին գործել է անձնագրային բաժանմունքը:

Հարենցավան համայնքի ավագանու անդամներ՝

Առաքելյան Նորայր

Բաբայան Արայիկ

Բաղդասարյան Սահակ

Գալստյան Արթուր

Գևորգյան Գևորգ

Դավթյան Կարեն

Եփրեմյան Բաբկեն

Եփրեմյան Տարոն

Թադևոսյան Նունե

Խաչատրյան Արշակ

Հարոյան Լիլիթ

Ղամբարյան Գարիկ

Մալխասյան Նորիկ

Մակինյան Վարդան

Մուքայելյան Վալերի

Շահգալդյան Հակոբ

Պալյան Գարիկ

Պապոյան Դավիթ

Պետրոսյան Ավետիք

Պողոսյան Մնացական

Սահակյան Գառնիկ

Վարդանյան Նորայր

Վարդանյան Սարգիս

Վարդանյան Սևակ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ